ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 77-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Մեխակ Լևոնի Մեջլումյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 816773 վկայականը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 21.11.2022թ. տրված N 1394 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Մեխակ Լևոնի Մեջլումյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Հաղպատ գյուղում գտնվող, 06-060-0002-0008 ծածկագրով, 0.509 հա մակերեսով տնամերձին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 1-ին փողոց, 64 հողամաս փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 21
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 78-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի 10 շենքի հյուսիսային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 17.8 քմ արտաքին մակերեսով (15.8 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի 10 շենքի հյուսիսային մասում գտնվող, 1985թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2022GDP3BD ծածկագրով հաշվառված, 17.8 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00178 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Դեբեդ թաղամասի 10 շենքի հյուսիսային մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, 98 ավտոտնակ փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00178 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Էմմա Պետրոսյանին, օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 79-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմիցտրված թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/22 շենքի հյուսիսային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 45.1 քմ արտաքին մակերեսով (38.9 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/22 շենքի հյուսիսային մասում գտնվող, 2004թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2021MADL9H ծածկագրով հաշվառված, 45.1 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00451 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/22 շենքի հյուսիսային մասում գտնվող բնակելի նշանակության ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 61 փոստային հասցե:
4. Բնակելի նշանակության ավտոտնակի զբաղեցրած 0.00451 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Արեն Վախթանգի Լալայանին օրինականացված ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 23
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 80-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի գրությունը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին տրամադրել շինարարության թույլտվություն և թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, 3/10/1 հասցեում գտնվող, «Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային ապահովվածության բարելավման՝ կառուցման շինարարական աշխատանքները:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. նոյեմբերի 24
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 81-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01.11.2022Թ. N 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

Ալավերդի համայնքի ղեկավարի 01.11.2022թ. «Փոստային հասցե տրամադրելու մասին» N 18-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. «0.232» թվերի փոխարեն կարդալ «0.11633» թվերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 24

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 82-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԾԱԾԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 14.11.2022թ N 63-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 18112022-06-0039 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Անժելա Բոշյանն ընդունել է բնակելի տունը, ջրավազանը, ծածկը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, 118 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 14.11.2022թ N 63-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 15.6 քմ արտաքին մակերեսով (12.0 քմ ներքին մակերեսով) բնակելի տունը՝ 34772 (երեսունչորս հազար յոթ հարյուր յոթանասուներկու) դրամ արժեքով, 17.1 քմ արտաքին մակերեսով (13.0 քմ ներքին մակերեսով) ջրավազանը՝ 25411 (քսանհինգ հազար չորս հարյուր տասնմեկ) դրամ արժեքով, 7.3 քմ արտաքին մակերեսով ծածկը՝ 10848 (տասը հազար ութ հարյուր քառասունութ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.04 հա մակերեսով հողամասը՝ 134640 (հարյուր երեսունչորս հազար

վեց հարյուր քառասուն) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Անժելա Բոշյանին:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 24

ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 83-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596 որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրությունը, տեխնիկական պայմանները ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, գյուղ Ճոճկան, Երկաթուղային փողոց, շենք 1 հասցեում գտնվող՝ ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմի հաշվեկշռում հաշվառված մասնաշենքին տալ նախագծման թույլտվություն /ճարտարապետա-հատակագծային առաջադրանք/՝ գազատարի կառուցման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 24
ք. Ալավերդի